մլթ.

Զմոզգովաց Թագաւորն նոր լոթրան և Թանձր պրուշեան կալան, և կայ այժմ յարգելանս, և կին նորա որ է մեռեալ Թագուհւոյն քեռ դուստրն, Թագաւորէ այժմ։ Այս դիպաւ նմա վասն երից. նախ զի ի դաւանութեան մոսկովեան հաւատոյն ոչ եկաց. այլ զլոթրանութիւնն հանդի֊սացոյց ոչ միայն յանձն իւր և յոմանս, այլ ի բոլոր Թագաւորութեանն կամեցաւ մուծանել։ Երկրորդ՝ ստեաց երդմանն կալոյ ի հաշտութեան ընդ տանն աւստրիայու։ Երրորդ, ձեռնտու եղև Թշնամւոյ մեծի տանն աւստրիայու և մոսկովու։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ Աճ. 1762 Օգոստ. 7. [Ս. Ղազար])։

մխ.

Լուայ ես Թէ Թագաւորն բանտարկեալ նախ ունեցեալ է ես զկամս բաժանիլ ի Թագուհւոյն, և զայլ կին առնել. ուստի այսմ ես գիտակ գոլով Թագուհին, աճապարեաց հոգալ զբան առն իւրոյ ունելով և զայլ պատճառանս։ Եւ գրեաց առ Թագուհին Հերմանիայու, Թէ ընդ քեզ եմք են.։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ Աճ. 1762 Օգոստ. 14. [Ս. Ղազար])։

մխա.

Վասն յունաց եպիսկոպոսին որ է ի նազարէԹն, ծանիր, զի լուայ Թէ ձեռնադրօղքն սորա, ոյք էին եպիսկոպոսքն քեօրֆէզու և քէֆալօնիայու, ծածուկ բանադրեալ են ի պատրիարքէն ստամպօլու. ուստի ի առաքելն յունաց առ պատրիարգն ստամպօլու զգիր, զի զհաստատութիւնն իւրեանց եպիսկոպոսին տացէ, նա գրեալ է, Թէ ոչ ինչ է եպիսկոպոսութիւն սորա, զի բանա֊դրեալ էին ձեռնադրօղքն։ Եւ սոքա պաղեցան յոյժ իւրեանց եպիսկոպոսէն, և դարձեալ գրեալ են գիր առ պատրիարգն ստամպօլու, և սպասեն Թէ զինչ լուր գայ։... Թագաւորին տանկաց երեք֊ամեայ դուստրն մեռեալ է։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ, 1762 Սեպտ. 1. [Ս. Ղազար])։

մխբ.

Իմացայ... ես վասն Լիբանանեցւոց, և գնեալ տեղւոյս նոցա, և հալպու նոր հաստատեալ վիգարին. որով լիբանանու հայոց կաԹողիկոսն ամենևին Թարմատարի։... ասես ստոյգ, Թէ տա֊ճիկն պատրաստի ընդ ծով և ընդ ցամաք ի պատերազմ. և Թէ զօրքն խնդրեալ իցէ զայս։ Եւ Թէ հրաման տուեալ է ժողովել զօրաց ի պէլկրադա։ Եւ ի պօսնա պատրաստութիւն կերակրոց դնէ. և ստոյգ ոչ լինի գիտացեալ Թէ յոյր վերայ չարժի։ Սոքա ես աստ ծածուկ պատրաստութիւն նաւուց տեսանեն։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ Աճ. 1762 Սեպտ. 11. [Ս. Ղազար])։

մխգ.

Վասն պատերազմաց... լուայ Թէ ֆրանսզն և սպանեօլն հաշտեալ են ընդ ինկլիզին. և այս֊պէս մնաց միայն ռէճինան ընդդէմ պռուշին, զի ի մոսկով ես լսի Թէ չփոԹուԹիւն գոյ։ Իսկ տաճիկն ասեն, զզօրսն զօրս յայլևայլ կողմանս առաքեալ էր յետս կոչեաց։... Վասն տաճկական պատերազմին գրեցի վերագոյն. և զի այն երևոյԹն պատրաստուԹեան պատերազմի ասեն լինիլ վասն պարըշին, այսինքն մինչև կատարեսցի այն դաշնադրուԹիւն, և յորժամ եղև այն պարիշն, վերջացոյց պատրաստուԹիւնն, զայսմանէ այլևայլ խօսին։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ Աճ. 1762 Սեպտ. 25. [Ս. Ղազար])։